# 973

1. Կյանքը մարդկանց հայտնի է
Իր արտաքին փայլով,
Առավել հրաշալի է
Կյանքն Հիսուս Քրիստոսով:
Տիեզերքի Արարչին
Երբ որ հանձնվես,
Սրտիդ խորքում այդ պահին
Լիարժեք կյանք կապրես:

2. Կյանքն այդ հասկանալի է,
Նպատակը՝ պարզ,
Խոստումն էլ լսելի է.
«Իմն ես դու հավիտյան»:
«Ես քո հայրն եմ, որդի՛ս,
Ես քեզ սիրում եմ,
Քո ճամփան դեպի երկինք
Միշտ չարից կպահեմ»:

3. Մի, որքա՜ն ենք երջանիկ
Աստծուն ճանաչելով.
Գոհանում ենք Քրիստոսից
Մեծ ուրախությունով:
Նույնիսկ այս խավար
կյանքում
Լույս է Տիրոջ հետ,
Մենք հավիտյան Հոր գրկում
Ապաստան կգտնենք:

4. Ծուտով արի՛ Հիսուսին,
Իմ եղբայր և ընկեր,
Նա մեծ սիրով կընդունի,
Հանգիստ կտա քեզ:
Նույնիսկ շատ դժվար
կյանքում
Նա քեզ կպահի,
Հետո հավետ Իր գրկում
Քեզ կփայփայի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025